


ՇԱՐՋՈՒՄ

Լավակ և քան որդեկ
Կերպարներու հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

Me Shi Mashting...
Menne
4

ԱՄԵՐԻԿԱՆԻ ԿՐԹԱՐԱՆՆԵՐ
Պուրիտանական հասցիին
Տարեկան 12 ր.
Վեցամսեայ 6 ր.
Արտասահմանի հա-
մար տարեկան 12 ր.
Վեցամսեայ 6 ր.
ԿԱՆԻՍԻԿ ՎՃՋՐԵԼԻ
—)(—
Գրութիւնք եւ չեն տուիր
—)(—
Ծանուցման տողը 20 սան-
թիւն է. Լրեփին աւելի սան-
թիւններու համար 20 ՕԼՈ
գեղջ կը լինայ:

ՍԱՆՆԱԻՈՐ ՎԱՐՔԱՐԱՆՆԵՐ

Վերջին օրերս մասնաւոր վարժարաններու հաստատման արձագանքները կը հասնին մեզ:

Ուսուցչութեան նամակ մը ընդունած ենք որուն հեղինակը ծայրայեղ իրարանցումով կը փութայ մատնանիչ ընել հոն հաստատելի մասնաւոր դպրոցին զաղափարը, իբրեւ աղետ մը, իբրեւ վէրք մը որ կը սպառնայ բացուիլ կրթական գործին վրայ, և որուն առաջը առնել մեր ամենուս պարտքն է:

Մեր կարծիքով մինչև այսօր մասնաւոր վարժարանները լատիւնները եղած են մեր մէջ. և անոնք են որ կեդրոնականի հաստատումէն շատ առաջ, զուտ ազգային կրթութիւնով օժտուած, հմուտ, ազգասէր և եռանդոտ երիտասարդութեան մը առաջին պտուղները հասցուցած են:

Բաւական է որ անոնց վարիչները չէ թէ Միքիմանեանի մը պէս անբարոյականներ, այլ իսկապէս գործին նուիրուած, ձեռնհաս անձեր ըլլան, մնացեալ ինքնին կը կատարուի: Խտացած պարտականութեան ահեղ գաղափարը, ձեռնարկին հանգամանքը որ էութեանդ հետ սերտ կերպով կը շաղախուի, ապագան զոր ոչ ոք կրնայ ձեռքէ խլել, այնպիսի ազգակներ են որոնք արդէն տոկուն նկարագրի մը վրայ բարգաւազով, ուր է թաղային մարմնի հաւաքական ուժերը գերազանցապէս գերակշռեն:

Լուին: Վէճերը կը դադարին, հոգաբարձուները իրարու ահանջի կը փոփոխան, կուշարերին, կամփոփուին... Թշնամիին դէմ մաքառելու, և այս մաքառումէն միշտ ուսանողութիւնն է որ կը շահի:

Անշուշտ Պուրիտանացի պէս անձուկ միջավայրերու մէջ, մասնաւոր կրթարանի մը գոյութիւնը ազգայինին առնթեր կրնայ զգալի խրամ մը բանալ երկրորդին ելեւմուտքին մէջ. անշուշտ փափագելի է որ բոլոր ուժերը ամփոփուէին նոյն կէտին վրայ, ուր քովէ քով նստած են հարուստին և աղքատին զտակները: Բայց այս փափագ մըն է լոկ, այնքան անիրականալի, որ քան այն անհամար ուրիշ փափագները, որոնց իրականացման ամբողջ սերունդներ սպասած են:

Այս կողմերը մինչև հիմա բնաւ մասնաւոր լուրջ կրթարան մը գոյութիւն ունեցած չէ. ո՞ւր է յառաջդիմութիւնը, Չէ՞ մի որ առանց անոնց ալ կրթական գործը միշտ տառապած է. դպրոցները ո՛չ ուղղութիւն ունեցած են ո՛չ յարատեւութիւն, և, հոգաբարձուական անհատներու տաղտկալի կուռներուն մէջ, անոնք բիւր անգամ բացուած գոցուած են բերեզակի կրպակի մը պէս:

Մեր ազգին մէջ մասնաւոր դպրոցները իրենց խղճահար կրթիչի գերէն դուրս, գաղանազուսպի դերն ալ կատարած են հոգաբարձուական գառազեղին մէջ: Այս կրկնակ նկատումներով միշտ համակիր պիտի մնանք անոնց, բայց միայն այն առնելով, երբ տեսնենք թէ արժանի ձեռքերու մէջ են, համոզումի, սիրոյ, կոչումի և խանդի արդիւնք են. այլ ոչ թէ անձնական հակառակութեանէ ժայթքուած կրթական վիժմաներ:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻԻՐ
—)(—

ՄԻԱՍԻՆ...

(Aquis puris aqua...)

Չգացմունքով մենք եղբայր ենք. միանման գաղտնի խոհերն ենք փայտայել մեր գլխում, և, համոզված եմ որ երբե՛ք առիթ չենք ունենալ զղճալու այս աշխարհում: Բարութիւն թէ չարութիւն ենք արել, ի՞նչ փոյթ, թո՛ղ եկող սերունդը դատէ. իսկ հիմա, եկ, ձեռք ձեռքի տանք և անյողգողք քայլերով առաջ գնանք...

Այս կեանքում միասին տանջվել, միասին նեղվել և տուրազրվել ենք. մինչև հիմա այս բոլորը բաժանել ենք եղբայրար, կրկին բաժանել ենք երկուսով...

Դեռ մարդիկ մեզ շատ կը հալածեն ու կը ծաղրեն. հոգ չէ. չը հառաչենք, ախ չը քաշենք մարդկային ոչ մի տանջանքից. գլուխ չը խոնարհենք ոչ կրքերի և ոչ աշխարհի լուռքերի առաջ: Ե՛կ, մեր սրտերում թագնվածը պատմենք երկուսիս տխուր քնարներով...

Ե՛կ, մի սիրտ և մի հոգի դառնանք. գնանք յառա՛ջ, կատարենք մեր սուրբ երդումը և, դէպի մա՛հ, եղբայր, դէպի կուռ... թռչենք երկուսով...

ԻՆԲՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

«Մարտի հրատարակութիւնները թուրքական ճշգրտութեան վրայ հիմնուած են»:
(Մարտ, թիւ 12)

«Յախուռն, անիմաստ, անօգուտ յարձակումներու դէմ ամէն քննադատութիւն քիչ է: Բայց ինքնապաշտպանութեան իրաւունքը ակներբու ու անտարակուսելի մահուան առջեւ, սրբազան իրաւունք մըն է և սպասելով լաւագոյն օրերու ատիկա, պէտք է ըլլայ հայութեան ծրագրերը»:
(Արփիար—Մարտ, թիւ 11)

«Վերջին գրութիւնը հրատարակելու վաղի հայուն սրտին խորը, ու

այդ սուրբ հուրը կը պահպանէ հայ ազգութիւնը և անոր վերածնութիւնը կերպարաւորէ»:
(Արփիար—Նոր-Կեանք, թիւ 14)

Այս բոլոր դժբախտութիւնները (կոտորածները) կողկասի հայոց ձեռներէցութեան հետեւանքն են»:
(Արփիար—Մարտ, թիւ 14)

«Երկու կողմէն ալ ազգային ոգին է, ազգային քաղաքականութիւնն է, որ անհրեւութացեալներու գերեզմանին վրայէն կը շարունակեն ոչնչացումի և ինքնապաշտպանութեան հինգադարեան մենամարտը»:
(Արփիար—Նոր-Կեանք, թիւ 14)

«Հայ ժողովուրդը ամէն տեղ քաջ համոզուելու է, որ այդ իբր թէ «յեղափոխական» կոչուածները ժողովուրդը կոտորածի առջնորդիչ զատուրիչ բան չեն կրնար ընել»:
(Արփիար—Մարտ, թիւ 14)

«Մինչև հիմա մղուած մաքառումին կըք մեզի համար աւելի քաջալերիչ է քան թէ վհատեցուցիչ»:
(Արփիար—Նոր-Կեանք, թիւ 15)

«Դաղթականներու վերադարձին քիչ շատ դիւրացում (եւ այլն) կառավարական աւելի խելացի մտածութիւններուն նշանները կրնան համարուել... Ուրեմն ինչ որ մենք այժմ կրնանք ընել զինադադար է, քանի որ օսմ. կառավարութիւնն ալ զինադադարի նշանը կուտայ»:
(Արփիար—Նոր-Կեանք, թիւ 14)

«Քանզուած է իրենց (հայ գաղթականներուն) տունն ու տեղը. յափշտակուած իրենց ստացուածքը, ալ ո՛չ եզ, ո՛չ գուլթան. հրացանը ձեռքը քիւրտը իրենց կրպակէն թիւրքը արդէն ակոսները կը սրէ»:
(Արփիար—Մարտ, թիւ 12)

Ա.
Ինքնապաշտպանութիւնը, որ անհատին բնազդական իրաւունքն է ու վտանգուած ազգերու նուիրական պարտականութիւն մասնաւոր թըրքական կործանարար լախտին հարուածներուն ենթակայ ժողովուրդներու համար է գոյութեան անհրաժեշտ պայման: Մեր անցեալի աղետալի փորձութիւններէն յետոյ ոչ ոք կըրնայ հերքել այս պայմանը եւ յաճախ զայրոյթի շնչերով կը յիշուի հայ ժողովուրդի դիւրախաբութիւնը ջարդերու ատեն ու զայն ինքնապաշտպանութեան միջոցներէն զրկող ազգասպաններու կատարած աղետալի դերը: Սակայն լոկ զայրոյթ մը,

այնպիսի սուղ փորձառութենէ խրատուած ըլլալու միտքարութիւնը չկրնար ընծայել մեզ . եւ խնդիր է քննել թէ յեղափոխութեան առժամայ ձախորդութենէն ի վեր մեր մէջ նորութեան կարգ անցած հակայեղափոխական խոհմտութիւնը սրշտի իրաւունք ունի բողոքելու անոնց դէմ, որ նոյնպէս շանուն «խոհմտ» ազդարարութեան» զինաթափ ըրին ժողովուրդը ու մասնեցին թշնամիի դանակին :

Մեր ազգային ինքնապաշտպանութեան միջոցները որոշելու համար պէտք է նախ խմանալ մեր գոյութեան սպառնացող թշնամիին մեզի դէմ ձեռք առած միջոցները . ճիշդ ինչպէս ռազմական մը պաշտպանողական ծրագիր մը պատրաստելու համար կը քննէ հակառակորդին յարձակողական միջոցները :

Հայկական խնդիրը հրապարակելուն ի վեր մանրամասնօրէն քնննուեցան Թուրքիայի մէջ մեզի դէմ մղուած ուղղակի կամ անուղղակի յարձակումները եւ այսօր մեր թշնամիի յարձակողական ծրագիրը ա՛լ զարանք մը չունի : Այդ ծրագրի գործադրութեան միջոցները ընթացիկ էին շատ առաջ, թրքական տիրապետութեան առաջին օրէն սկսեալ . սակայն ինքն ծրագիրը դեռ գոյութիւն չունէր : Այն ժամանակ թուրք կառավարութիւնը իւր կեղեքումներով քաղաքական նպատակի մը իրագործման չէր ձգտէր : Հարստահարութիւնն ու անարդարութիւնը արդիւնք էին առհասարակ զբաղի ցեղերու անտեսական պայմաններուն, կրօնական մտլոսանդութեան եւ տիրող վարչութեան անկարգ գրութեան :

Ինչպէս որ ինչպէս արդիւնաբերութեան անընդունակ քիւրտը եւ այլ հրոսակ ցեղերը ապրելու համար սոսկապէս թեւեւ ապրելու զիմէն ի հարկէ եւ իրենց զիւրին զոհը պիտի ըլլար քրիստոնէիայ հասարակութիւնը՝ իրբեւ ամենէն հարուստը եւ համեմատարար ամենէն անպաշտպանը շրջակայ տարրերուն մէջ : Թուրք խուժանը իւր քայքայածակ զինուորական նկարագրով մտայնեցական հպարտութեամբ

վարժուած էր միշտ ծառայական յարգանք ընդունել աշխարհի հպարտականներէն, սրոյ կեանքն ու ինչքը՝ ըստ իւր կարծիքին՝ արդէն բացառիկ շնորհ մըն էր, որ կրնար յարասուելի ցորչափ անոնք երախտագէտ հլութեամբ խոնարհելին մարդարէի ընտրեալ ժողովուրդին առջեւ : Կառավարութիւնը ինչպէս առ հասարակ ըստ Մսիական կառավարութիւնները, մեծ մասամբ բազկացած անխիղճ, աւազակ տարրերէ, հիմնուած բնագիտական վարդապետութիւններով մը, երկիրը կը նկատէր իրբեւարքունական ընդարձակ կալուած մը, որ կէ պէտք էր կարելի եղածին չափ մեծ եկամուտ կորզել : Այս պարագային ալ արդիւնաբերող քրիստոնէայ տարրն էր կրկին զոհը, մանաւանդ որ զուտ մահմտականներէ կազմուած վարչութիւն մը իւր գործողութիւններուն մէջ կրօնական խտրութիւն մըն ալ կը դնէր անտարակոյս :

Այս անծրագիր կեղեքումներու շրջանին մէջ, հարստահարուողներու կողմէ հարստահարիչներու դէմ կրեմին պատահած ինքնապաշտպանութեան դէպքերը մեծ ուշադրութիւն չէին գրաւէր, որովհետեւ կառավարութիւնը քաղաքական կարեւորութիւն մը չէր ընծայէր այդ դէպքերուն : Սակայն խնդիրը բոլորովին փոխուեցաւ այն օրէն, երբ հպարտաքրիստոնէաները սթափելով հաւաքական ինքնապաշտպանութեան զիմեցին, իրաւունքի դատը բացին . եւ եւրոպական պետութիւնները այդ դատը միջամտութեան պատրուակ ընարեցին : Այդ օրէն Թուրքիան վտանգուած զոչոյ իւր կայսրութեան անկախութիւնը, որու վտանգիչները եղած էին Գրիստոնէայ հոստակները եւ մանաւանդ անոնք, որ իրենց ըստմամբ գոյութեամբ ու պատմական իրաւունքներով պետական հերձուածներու ընդունակ էին : Թուրքը այս գծով հոգեկոնքն ազատուելու եւ իւր ամբողջութիւնը ապահովելու յարմարագոյն եւ է՛ն կտրուկ միջոցը համարեց ներքին վտանգաւոր տարրերու բնաջնջումը : Որքան բարբարոս՝ նոյնքան եւ անխոհեմ ծրագիր

մը, որ իւր կատարելութեան հասաւարդի Սուլթանին օրով : Աւ Ասիական Թուրքիայի մէջ այդ միակ տարրն էր հայը :

(Շարունակելի)

ՀԱՅՍՏԱՆԻ ՍՈՒՂԱՏԱՆՉ	
—) (—	
ՀՈՒՃԱԿ Ժ.	
Ֆիլիպէ Գ. անգամ	Յ. Ս.
Կիրակոս Ենկէլեան	2.—
Մանուկ Պետրիկեան	2.—
Պաղտատար Չաքարեան	1.—
Մեհարոյ Թօփալիան	1.—
Փիլիպոս Մինասեան	1.—
Ոմն	1.—
Գ. Գասպարեան	1.—
Կարապետ Փէնպէեան	1.—
Ոմն	—50
Ռոստոթեցի մը	—50
Խաչիկ Ճէնտինեան	—50
Գուժար	11.50
Գուժար Թ. ցուցակի	343.40
Համագումար	354.90

Հանդանակութիւնը վերջնապէս պիտի փակուի յառաջիկայ սեպտեմբեր 15ին : Կը խնդրուի այն անձերէն որոնք ստորագրելով հանդերձ տակաւին չեն վճարած, ինչպէս նաեւ հանդանակութեան մասնակցել փափագողներէն, որ մինչեւ վերագրեալ թուականը փութան իրենց լուծման մեղ հասցնել :

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

Հ Ե Պ Ս Ը Ն

Մեր Ամերիկայի թղթակցութեան մէջ կը տեսնանք Հըլլաքընը, «Մէրիմէքընը ընկղմող հերոսներուն պետը, որ չքնաղ ամբիրիկուհի մը համբոյրովը նոր Աշխարհի ամբողջ իրական սեռին հիացման եւ երախտագիտութեան

տուրքը կընդունի : Տուրք՝ որ երկու վարդ շուրթերու անտեսանելի դրոշմը կը զետեղէ ճակատի մը վրայ, բայց որ աւելի՛ թանկագին եւ հարազատ է քան աշխարհի ամէն պատանշանները ու ժապաւէնները :

Այդ սրտաշարժ սլացումը ինձ կը յիշեցնէ ուրիշ եւանդագին ցոյց մը, որուն առարկայ եղած է տիեզերահռչակ հերոսը Նիւեորքի «օրէրադին մէջ, ուր հրաւիրուած էր նախագահելու բարեգործական հանդէսի մը :

Ո՛չ մէկ որոտումի, ո՛չ մէկ պայթումի կարելի չէ բաղդատել այն խօս, ցնորական եւ մոլեգին տարափը գոչերու, ծափերու հո՛ւրբաներու, որոնք հայրենասիրական ամենէն կատաղի թափին ճնշման տակ սլանալով հաղարաւոր կուրծքերէ, ամբողջ վայրկեաններ տաղնապալից շուտումի կենթարկէին խեղճ հերոսը, շատ աւելի վարժ ուժերու, ալիաց եւ մահուան ճակատ տալու քան թէ հիացումի այդ հանգ արտայայտութեան :

Եւ եթէ այսօր, այնչափ օրեր անցնելէ ետքը, դեռ այժմէն թեան դրոշմ մը կուտանք ինդրին, պատճառը այն է որ, հերոսութիւն մը ամէն ժամանակներու յաւիտենական այժմէն թիւնն է . եւ դարերու թանձր խաւերը ճեղքելէ ետքն իրի, միշտ նոր, միշտ թարմ եւ բուրամաւէտ կը մնայ . հաւատարապէս ինկալի, ուսկէց ալ բիտ այն . Աւարոյրի դաշտէն, Թէրմոփիլէի կիրճէն, Պանքի սեմէն եւ կամ Սանթիակոի նեղուցէն . . .

Չկայ բան մը որ աղք մը բարձրացնէ, անոր հանդարտ զգայուններուն կրակ տայ, ու հոգիին լոյս, որ անհատին միշտ

Շ Ա Ր Ժ Ո Ւ Ս (32)

Նազիմը ինձ հետ խօսելիս՝ շարունակ նայում էր Մակսիմովի կողմը եւ ժպտալով կարծես ներողութիւն խնդրում որ այդպիսի մի սխալ է պատահում :

Այդ միջոցին ես շատ լաւ հասկացայ որ Մաքսիմովը մի եռանդուն, իր տէրութեան պատիւը միշտ բարձր պահող ցարին հաւատարիմ, եւ նրա գործութիւնը խրոխտ կերպով զգացնել սուղ պաշտօնեայ էր : Այդ իմ գործին զալիս էր . որովհետեւ Մաքսիմովը միշտ ինձ կը պաշտպանէր զօրաւոր կերպով, ո՛չ թէ սեւ աչքերիս կամ հայ լինելուս համար, այլ նրա համար որ ես իր պաշտած ճարի հպատակն էի, եւ բախտ էի ունեցել Ռուսական արծիւի թեւերի տակ ծնվել : Մաքսիմովը միշտ կաշխատէր թուրքերի առաջ իր ցարի անդ զօրութիւնը դպացնել սալ առաւելապէս իր վեհապետի պատիւ համար : Կը պաշտպանէր օտարի մօս . իսկ իրանց իշխանութեանց ձեռքը ընկնելուց յետոյ՝ ամէն բան իր կարգով կերթար, այսինքն ցարի օրէնքները կը գործադրուէին ճշգրտութեամբ :

Այդ էլ ինձ բաւական էր, ես բախտաւոր զգացի ինձ որ արհամար

ածս թուրք կառավարութիւնը չէր կարող ինձ հետ իր ֆիզը ուզածի պէս վարվել . նա սանձ պէտք է դնէր իր դադանային ձգտուհիներն եւ ես կարող կը լինէի իմ արհամարանքս, ամբողջ հայ ժողովրդի զարաւոր ատելութիւնը չարաւի նրա ներկայացուցիչներէ երեսին :

Շուտով ճաշը բերին : Մի քանի բողոքում ճաւ վերջացրի, մօտեցայ պաշտօնական սեղանին որը բողոքել էին քննիչը, քեթիկը եւ Մաքսիմովը : Շուտով եկաւ եւ Նազիմը . նրա ետեւից սարկական խոնարհութեամբ ներս մտաւ եւ մի հայ ոստիկան :

Նազիմը հաղորդեց որ այդ պարտնը պէտք է լինի իմ թարգմանը . ես յայտնեցի որ հայերէն չպէտք է խօսեմ, այլ ռուսերէն :

Նազիմը նախ զարմացաւ, եւ սպաստարկեց .

—Այդ ինչպէս է որ դուք հայրենասէր էք, բայց ռուսերէն էք ուղում խօսել :

—Որովհետեւ չեմ հաւատում ձեր հայ պաշտօնեային . համոզուած եմ որ նա իմ առանձնը ուղիղ չը պէտք է թարգմանի, մանաւանդ որ խոսածս բաւական կծու պէտք է լինի թուրք կառավարութեան համար :

Հայ ոստիկանը քրտնելով տեղն ու տեղը ստանձ մնաց, սպա Նազիմի

հրամանը ստանալով՝ զուրք կախարած դուրս գնաց :

Մի քանի վայրկեանից հրաւիրվեց մի յոյն, որը գիտէր տաճկերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն : Նրա դէմքը շատ կարմիր էր . երեւում էր որ Բագուր թուրք պաշտողներէց էր . հիմա էլ գրէթէ հարած էր . վերջը իմացայ որ այդ պարտն Նազիմի անձնական բարեկամն էր . աշխարհի ամէն ծակ ու ծուկը մտած եւ շատ կասկածելի բարոյականով մի անձնաւորութիւն :

Վերջապէս սկսվեց հարցաքննութիւնը : Տաս օրուան մէջ արդէն որոշել էի ամէն կերպ աշխատել կարողացածիս չափ, հայ ժողովրդի արդարացի բողոքը խիստ գոյներով արտայայտեմ, սրչափ կարելի է թրքական հարստահարութիւնները բազմութիւն եւ ճիշդ օրինակներ բերեմ, արտայայտեմ հայ յեղափոխական տարրի պահանջները եւ բարձր պահեմ հայ յեղափոխականի պատիւը : Հաստատ վճուել էի ամէն ճիշ թափել պատուաւոր կերպով դուրս գալ այդ գաղտնի միջոց, որը իմ կարծիքով միայն ինձ չէր վերաբերում, այլ ամբողջ հայութեան, աւելի ճիշդ հայ երիտասարդութեան : Սեփական վիճակս էլ ինձ չէր հետաքրքրում : Ահա այս որոշումներով սկսեցի պատասխաններ

տալ իմ հարցաքննիչին :

Կննչի նախնական սովորական հարցերին պատասխանելուց յետոյ հարցը եկաւ թէ ովքեր էին իմ ընկերներս : Այդ տեղ ես մի քանի սուտ, հնարովի կեղծ անուններ ասել եւ սկսեցի անորոշ գոյներով նկարագրել իմ բանաստեղծական ընկերներին : Այդ արեւ այն նկատմամբ որ ժամանակ վաստակեմ, մինչեւ որ հասկանամ թէ ովքեր են ձերբակալված են ինչ զիրք են բռնել իմ մտածածին հերոսներս նկարագրութիւնը ոչինքան երկար եղաւ, որ ձերբանի քննիչս զժողովութեամբ յայտնեց .

—Էֆէնտի, դուք բոման էք պատմում, գործի մասին ոչինչ : Ձեր նկարագրած մարդիկը բողոքովն անորոշ եւ հնարովի զէմքեր են :

—Գուրք քննիչ էք եւ պարտաւոր էք ինձ հարցեր տալ, ես մեղադրող եմ եւ պարտաւոր եմ ձեզ պատասխանել . ինչ էլ որ ասեմ, դուք պէտք է բաւականանաք զբանով : Այդպէս պատասխանելով իմ պատմութիւններս շարունակեցի :

ըլլայ դէպի ամենէն զերազոյն, ամենէն ազնիւ իտէալը՝ որպէս անձնագոյնութիւնը հասարակաց բարոյն և Հայրենիքի համար, որքան հերոսութեան արեւը, նոյն իսկ հերոսը որ քու դէմք է, քեզի պէս կը խօսի ու շարժումներ կը նէ, բայց սր, երբ դուն մեռնիս, գերեզմանին խորերը անէանաս, ինք կանգուն պիտի մնայ միշտ փայլիլուն, միշտ սիրելի ու պաշտուած... անմահ:

Գ. Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւ-Եորք, 12 Օգոստոս

Փաստոր պատերազմ մը վերջացաւ աւելի փառաւոր խաղաղութիւնով մը: Տօներու դաղթային կայսրութեան աւերակներու վրայ կը բարձրանայ Նոր Ամերիկան, և մեծ թերթ մը կը յայտարարէ թէ այս Նոր Ամերիկան որ ներկային մեծ դորութիւնն է, թերեւս ապագային ալ աշխարհիս իշխող գօրութիւնը ըլլայ:

Անգլիա իր մեծ կլատսթինը թաղեց, Նոր Ա. խորհին կլատսթինը նոր կը ծնի: Վերջերս ամբողջ Մասաչուսէթ նահանգին ամենէն մեծ մարդը... 13 ամերիկան պապիկ աղայ մըն է կլատսթին անունով: Այս մեծ տղան իր պերճախօսութիւնովը յաջողեցաւ հազարաւոր ճնշուած գործաւորներու գործադուլ ընել տալ, ու այսօր ինք, ծաղկոցի դասերը ու պարտէզի գնտակախաղերը թողած, այս հազարաւոր գործաւորներու առաջնորդն է, զանոնք քաջախիտըն է, Պոսթրու հետ բանակցողն է. կէս վճարուած գործաւորներու արտունջները մամուլի ներկայացուցչին լուծու պարզողն է...: Եւ այս կլատսթինը երբ տեսաւ որ չափազանցներուն կրցաւ խօսք հասկցնել, անցեալ օր զիմեց իրմէ քիչ մը մեծ գործաւորներ տաքքներուն, ու... յաջողեցաւ 500 տղայ գործաւորիկներու ալ գործադուլ ընել տալու: Պոսթրու մէջ ինկան, զոնորութիւններով համագեղին կլատսթինը, մասամբ տեղի տուին գործաւորներու պահանջներուն, ու գործադուլները վերջացան, և... կլատսթինն ալ քաջուեցաւ հրապարակէն ու սկսաւ իր մանկական խաղերը իր հասակակիցներուն հետ:

Հըպարն, Մէքսիքի հերոսը, Մ. Նահանգները վերագործաւ պատերազմի վայրէջքի ո՛չ թէ իր անզուգահայտ հերոսութեան զափնիները ու փառքի պատկերը խլելու ժողովուրդէն, այլ իր ծիրունի հօր ձեռքերը համբուրելու համար, այն հօր՝ որ ամբողջ գիշերներ անքուն անցուցած՝ արցունք թափած էր իր գաւկին կանքի և մահու օրերուն միջոցին: Իր այս նուիրական պարտքը կատարելով հերոսը Պոսթրուն կը վերագահանար երբ Անիափոյիսի մէջ հուլանի դէմքով հրաշապեղ ամերիկոսէի մը, հայրենասիրութեան բուն սիրով համակուած, ու հերոսի գէմքէն յափշտակուած՝ ամբողջ ճեղքելով հերոսին վիզը կը պլլուի ու... ստաքուկ՝ զողոթուն համբոյրով մը կը թրջէ անոր երեսը...: Այսպէս Ներոսը՝ մեզմ ալ ազգու ժպտով մը կը փոխարինէ աղջկան համբոյրը, և զեղուն յաղթական ոտտոտուած երով՝ հաւրաններու ու ծափերու մէջ՝

ամբոխին կը խառնուի, և սակայն այլևս ամբոխին կը վերաբերէր այն: այլևս անմահ մըն է, ինքն ալ հերոսութիւն մըն է... հերոս մը համբուրած էր ու համբուրուած էր անկէ, միլիոնաւոր ամերիկոսէիներու համար նախանձելի դիւցազնուհին է այս յանդուգն հայրենասէր օրիորդը, որ ամբողջ ամերիկոսէիներու կրախտազիտութիւնը կը մատուցանէ մեծ զինացիներն... համբոյրով մը:

Թ. Չ.

Տոպրիչ, 25 Օգոստոս

Յտաւելի է ըսել որ տեղւոյ 80 ի չափ հայ տունները, որոնք ընդհանրապէս բարեկեցիկ զիրք մը կը վայելեն, լուռ ու մուռ կեանք մը կանցնեն, ոտկաւին պարուրուած թըքական փոսած բարքերու մէջ, և շատ քիչ կը հետաքրքրուին աղջային գործերով: Յատկութիւններ ունին սրանց պէտք է հաւնիլ. ինչպէս է ինստիտուտիւնը. բայց դժբախտաբար, աղջային դատին, որբերու խնամքին և կամ ուրիշ և է բարենպաստակ ձեռնարկի լուծումը նուիրելն ալ խնայողութեան գէմ կը սեպեն, և որքան հնար է կը զգուշանան այդ կարգի ու է... շատ յուսով են:

Կազմալուծուած հողաբարձութեան տեղ նոր ընտրութիւն կատարուելով, երկը հողիէ բաղկացած հողաբարձութիւն մը ընտրուեցաւ: Գարոյցը յառաջիկայ շարժու պիտի վերաբացուի, իսկ ընթացարանը գոցուած է. ապացոյց մըն ալ տեղացիներն անստարբերութեան:

Պիտի հաւատարմութիւնը ըսեմ թէ հոս իսկ քրիստոնեայները հանգիստ չունին թուրքերու և թաթարներու վախէն: Գրուած է ուրեմն թէ ուր որ Մուհամէտի լակու մը գտնուի հոն հանդիստ կեանք չմնայ:

Ս. Ք.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—)(—

Շեխ Նուր Մեհմետ՝ Շեխ ձէլալէտինի կրտսեր եղբայրն ու անոր «փոստաքի»ին վրայ նստողը, իր գիմազձութիւնն կը ներկայէր Բուխարայի լիակած հաճիւնրի տիպը, կարճ, մոտա ու մեղկ, առնականութէնէ իսպառ հեռու «Ֆիդիօնիստ»ով մը օժտուած իր խալիֆային «իրնութիւն» եղած էր: Իր լիազօր խալիֆայն Շեխ Ասնուր, խորամանկութեան ու խարդախութեան կատարելագործուած հրեշք, ամեն տեսակ շարք կը նիւթէր այդ երկրի հեռու խորշերու մէջ զեռապրող հայոց համար, ու երբ խմացաւ որ Կ. Պոլսի հաստատուած հայ կրթական ընկերութեան մը կողմէ՝ այդ գաւառներն այցելելու ու լեռնային Խիզանի ճիւղիկները, Սպարկերտի, Մոկաց, և ուրիշ գաւառները մէջը հայկական դպրոցներ բանալու ելած

ենք, չարաբաստիք տպաւորութեան մը ներքեւ չըկրցաւ զսպել իր դժոխային զայրոյթն ու մէկէն ի մէկ յայտնեց սր, «եթէ հայեր այս գործը յարատեւութեամբ շարունակեն, հիմակուրնէ մենք օճայն ու թէքքիէն ճամփադրուելու պատրաստութիւն տեսնենք»:

Շեխ Ասնուր իբրև թարգման մեծ Շեխին ու մեր մէջը կը խօսէր քուրդերէն որուն կը պատասխանէինք մենք իր լեզուով, մեծ Շեխին հայոց հետ ուղղակի խօսելը մեղք է, հայեր քանի որ քրիստոնեայ են:

Գիտելու արժանի էր այն տարօրինակ տեսարանը զոր նոյն օրը երկրկայան նամազի պահուն կր ներկայացնէին երկու հարիւրէն աւելի սօֆիներ, ամենքը մէկանց «Ալլահ հէյ» պօռալով ու այլանդակ ձայներ արձակելով անասունի պէս զալաուուններ կանչելն Շեխի նստած գահաւարակի շուրջը: Ու մարդ այս ամեն սնամէջ կեղծիքի ու աշխարհաւէտ կազմակերպութիւնները մէջը երբ կրօնի կուրուութիւնն ու հողի մղձաւանջը կը շնչարէ, ինչ գոյնով նկարելու է բարոյական այն հերոսները, որոնք այսպիսի կրօնքներ չիմը գրած են:

«Շեխ Նուր Մահմետ» իր ոչխարամիտ սօֆիներ իր զիարէթի եկող հաւատացեալներ իր տապալու մնալը քիչ թիւով մը դիտելէ ու յափրանալէ ետք, իր հօր խալիֆայի բերնով գիշեր բարի ըսելով մեզ, զնաց մարդաբէր իրական գրախտի մէջ անգործ գիշեր մը անցունելու:

Իսկ մենք երկը ընկերներու առանձին սենեակի մը մէջ բաւական կակուղ անկողինի մը վերայ ինկանք սրտով ու մտքով յոգնած գիշերուան ծանր քունի հետ օրուան տպաւորութեան ներքեւ յուզուած սրտով երազեցինք արխուր ու զուարթ յափշտակութիւններով:

ՊԵՏ

ՔՐՈՆԻԿ

—)(—

«Ալի. Չայթունկ»ի Պոլսի թըզթակիցը կը գրէ թէ սեպտ. 23ին, անկլօ-հայկական միութեան նախաձեռնութեամբ կլատսթին մէջ գումարելի կարեւոր միթիկի նպատակը չէ թէ կարօտ թըքահայերու համար հանդանակութիւն բանալ է, այլ աւելի հայասիրական նոր շարժումի մը սկիզբը հանդիսանալ:

Այս ենթագրութիւնը սա պարագայով կարգարանայ թէ, ի միջի այլոց, միթիկին մէջ հայոց գործը պաշտպանող լրտղութեան զանազան յոգուածներ և պրօչիւրներ կը ցրուին և կը կարդացուին:

Ինչպէս կերեւայ Անգլիա լուծու միտք չունի թէ և ի կարգ

հրաւիրուած էր «Իրաւունք»ի «Անգլիա թող լուծ» յոգուածով: —Քէմախցի աղջային մը իր հայրենակիցներուն ուղղուած «բաց նամակ» մը զրկած է մեզ՝ որով դառնապէս կը գանգատաւնոնց յետագէմ վիճակին և փոսած զաղափարներուն համար, և շերմապէս յորդոր կը կարգայ որ աւելի մօտիկ ըլլան ժամանակիս առաջը լիակաւ ոգիին: «Շարժինք, կը գոչէ, արթնանք, ժամանակը յառաջ կերթայ, դարը լուսաւորութեան և դպրոցի դար է»:

—Շուշիի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին Կաթողիկոսը ընդունելու: Առաջին անգամն է որ հայոց կաթողիկոս մը Ղարապաղի այս նահապետական ժողովրդին կայցելէ:

—Տիգրիսի մէջ կը կարգանք թէ Տ. Վաղինակ վարդապետը Ամերիկայի Հարթֆորտ և Նիւ Հէյլըն քաղաքներուն մէջ որբերու ի նպաստ հանգանակութիւն մը ընելով, 116 տղար հաւաքած և Բազելի ու Խարբերդի որբանոցներուն զրկած է:

—Պոսթրուն Տ. Կ. Փափազեան, արտասահմանի հայ մամուլին Ձէյթունի մասին տուած ստոյգ և սրտածմբիկ տեղեկութիւններէն զգածուած, կառաջարկէ իսկոյն հանգանակութիւն մը բանալ, քաջարի լեռնականներուն օգնութեան հասնելու համար:

Առաջարկողը կը յուսայ թէ ամենէն աղքատ հայը իսկ 25 սենթ նուիրելու չպիտի վարանի, որով սուղ ժամանակի մէջ 5000 տղար կարելի պիտի ըլլայ հաւաքել միայն Ամերիկայի մէջ: Եթէ գաղափարը իրականանայ, մեծ պատիւ կը բերէ նոր Աշխարհի հայերուն, որոնք անգամ մըն ալ ապացուցած պիտի ըլլան, թէ ովկէսնի մը անընդարձ իսկ մոռցընել չէ տուած իրենց՝ հայրենիքին այդ սիրելի խորշը, պաշտելի Ձէյթունը:

—Էտիրնէնէն կը գրեն թէ ինչպէս Պուլկարիոյ հարաւային կողմերը, հոն եւս զարհուրելի ողորուններ տեղի ունեցեր են, որոնք իրենց հետ քշեր տարեր են հողագործին այնքան քրտինքով արտագրած հունձքերը: Եղած ֆրանսերը ահագին են:

—Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Մուշի կողմերը վերջերս պատահած չարագրու մասին շրջած զըրոյցները անհիմն են. ոչով հեռու ո՛չ Անգլիական գեսպանին, որ հիւպատոս ունի այդ քաղաքին մէջ և ոչ ալ մեր պատերազարանին այդպիսի լուր մը հասած չէ: Միայն յայտնի է թէ բազմաթիւ հայեր ձերբակալուած են միւսալիմանի մը գիակը գտնուած ըլլալուն համար:

—Փիլիպպի ձամպաղ-թեփէ թաղի մէջ, անցեալ շորեքշաբթի գիշեր հրդեհ ծագելով, շորս բը-

նակարաններ և յունական դպրոցին մէջ մասը այրեր են :

—Մօլտի (Անգլիա) մէջ աւարտած է այն շքեղ յիշատակարանը որ այժմ կը բարձրանայ Կլաստթոնի հաւատարիմ . . . շունին գերեզմանին վրայ : Յիշատակարանին վրայ սեւ սառերով գրուած է չորքոտանիին ծննդեան և մահուան թուականները և «հաւատարիմ մինչեւ ցմահ» վերտառութիւնը : Ահա երջանիկ շուն մը, որ իրեն պոլսեցի նմանիննրուն նախանձը պիտի շարժէ, թէ և անոնք աշխարհիս ամենէն երջանիկ շուները ըլլալու համբաւը կը վայելեն, և շատ աւելի հանգիստ են քան Օսմ. հպատակները :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Տ Ր Է Յ Ֆ Ի Ի Ս

Եթէ չափազանց յուստիւսութիւն են այդ երթագրութիւնները թէ օր մը այս Տրէյֆիւսի գործը յեղափոխութեան մը կըրնայ յանգիլ Պրանսայի մէջ, գէթ պէտք է ընդունել թէ յապարհի շփոթութիւններու երկարաձիգ շարք մը կը գուշակուի այդ յարափոփոխ երկրին համար :

Պատերազմական նախարար Պ. Բալէնեաք որ ճշմարտութիւնը մերկայարանոց երեւան հանելու խոխորտանքը ունեցած էր, Հանրի գնդապետին կեղծարարութեան հետեւանքով սքլած, բոլորովին հակառակորդ վերաքննութեան այլեւս անխուսափելի գաղափարին, և միշտ պընդելով թէ Տրէյֆիւս յանցապարտ է, հրաժարած է իր պաշտօնէն, զայն թողնելով Բարիզի զինուորական կառավարիչ Ջիւրլինսէն զօրավարին :

Մամուլը միահամուռ է այնքան պախարակելու Բալէնեաքի դասալքութիւնը որքան գովելու Ջիւրլինսէնը, որ քաջութիւն ունեցած է այս տագնապալի վայրկեաններուն մէջ պատերազմական նախարարի ծանր պաշտօնը ստանձնելու :

Տիկին Տրէյֆիւս ևս ներքին գործերու նախարարին երկար և սրտաշարժ նամակ մը գրելով վերաքննութիւն կը պահանջէ :

Եւ ահա ձեզի անհատում դատավարութեան մը հեռապատկերը որ բաւական հետաքրքրական իրադարձութիւններ պիտի բերէ մեզ, այնքան շահեկան . . . յառաջիկայ ձմրան երկար գիշերներուն համար :

Ի Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր ԵՐ

Ինթերսպուրկէն կը հաւատեն թէ Ռուսիա Երկրիոս իշխանին ընտրելիութեան գաղափարէն չէ հրաժարած, և թէ այդ ընտրելիութիւնը միշտ բանակցութեանց առարկայ է այն պետութիւններու միջեւ որոնք ուղղակի շահ ունին Կրետական խնդրոյն բա-

րեյաջող և տեւական լուծման մը յանդերուն մէջ :

—Կրէտէն կը հեռագրեն թէ թուրք կառավարիչը հրուիրուեր է միջազգային իշխանութեանց ձեռքը յանձնել տասանորդի տուրքերը կառավարելու գործը, այս տուրքերը սահմանուած ըլլալով կը զուտ զարչութիւնը ապահովելու :

Կառավարիչը խնդրած է ծովակալներէն որ այս կարգադրութեան գործադրութիւնը յետաձգեն մինչեւ որ ինք Դրնէն նոր հրահանգներ ստանայ :

—Կրէտէն հասած վերջին հեռագիրը շատ աւելի տագնապալից է : Թուրք ամբոխը գանձման նոր գրութեան հակառակեր և տեղի տուեր է նոր խառնակութիւններու, որոնց միջոցին քանի մը Անգլիացիներ զոհ գացեր են : Այս պատճառաւ Անգլիական ծովակալը հրամայեր է քաղաքը ամրակոծել :

—Ռուսներու թագաւորը մօտերս Վառնա պիտի գայ փոխադարձ այցելութեան ֆէրահնանտ իշխանին որ արգեն Լօքսինսկի քաղաքը կը գտնուի :

—Երուսաղէմի մէջ ահազին պատրաստութիւններ կը տեսնուին, Թուրքիոյ պաշտպան Վիլհէլմ կայսրը ընդունելու Եւֆրատէն Երուսաղէմ նոր ճամբայ մը կը շինուի գերմանացի երկրաչափի մը հսկողութեան ներքեւ : Ասկէց զատ, գերման կայսրուհին ձի հեծնելու անկարող ըլլալով, և միւս կողմէ փափագելով անպատճառ Ձիթէնեաց Լեւը Ելենել, Սուլթանը արեւելեան հաճոյակատարութեամբ, հրամայեր է կառքի յատուկ նոր ճամբայ մը բանալ Դամասկոսի նաւահանգիստէն մինչեւ լեւան կառարը :

—Վերելի շաշլութիւնները չէ որ Թուրքիոյ հիւժարտաւոր ելեւմուտքը պիտի կարգի բերեն : Թուրքիոյ ելեւմտական նախարարներուն գործը գէշ է : Վերջին նախարարին հրաժարման պատճառը այն է որ Սուլթանը հրամայած ըլլալով իր գահակալութեան տարեդարձին առթիւ մէյ մէկ ամսական տալ բոլոր պաշտօնեայններուն, նախարարը, ծանօթ պատճառով այս հրամանին գործադրութեան անկարելիութիւնը յայտնած էր, նա մանաւանդ որ արտօնութիւն չունէր յունական տուրքէն մնացած և օսմ. պանքայի մէջ պահեստի գրուած 2 միլիոն ֆրանքին դրպչելու : Միւս կողմէ նախարարը Պոլսոյ զանազան գրամատուներէն սանթիմ մը փոխառութիւն ընել չէր յաջողած : Ի՞նչ վարկ :

—Սերպ կառավարութեան պընդումներուն վրայ, Դուռը համաձայնէր է սերպ պատուիրակի մը մասնակցութեան այն յանձնարարութիւնը որ պիտի քննէ թուրքերու գործած վայրագութիւնները ևս կիւպի նահանգին մէջ : Բայց

վերջին լուրերը կը հաղորդեն թէ Սաատէտին փաշա Իւսկիւպ հասնելով, ինքի գլխուն գործի սկսեր է առանց սերպ պատուիրակին գալուն սպասելու :

—Եգիպտոսի խորքը, անգլո-եգիպտական բանակին տէրվիչներու դէմ մղած պատերազմը օրէ օր լուրջ հանգամանք մը կը ստանայ : Այս պահու վերջացած ըլլալու է վճռական պատերազմը որուն վերջնական լուրը անձկութեամբ կը սպասուի :

Քիչներ զօրավար անցեալ հինգշաբթի Գէրէրէն մէկ ու կէս մղոն տեղ յառաջացեր է, իր առջեւէն քշելով տէրվիչներու յառաջապահները : Տարբեր զօրաբանակ մը մինչեւ Գորչապէլ երթալով հոն տեսեր է տէրվիչ բանակը, իբր 36,000 հոգիէ բաղկացած, և պատերազմական կարող շարուած :

ՁԵՆՆԻԿԵՑՈՒԹԻՒՆ

Չարին առաջարկը որ կը շարունակէ ոգեւորել մամուլը և գիււանագիտական աշխարհը, հետեւեալ խոհերը թեւադրած է երեւելի գիււանագիտի մը :

«Չարին առաջարկը Անգլիոյ դէմ ուղղուած է : Ռուսիա այս վարպետութիւնով, Անգլիոյ կողմէն Չինու վրայ ըլլալիք ու է յարձակում կը մեկուսայնէ, և ժամանակ կը շահի : Եթէ չյաջողի յետաձգել Անգլիոյ հետ ունեցած խոչոր հաշիւներուն կարգադրումը մինչեւ այն օրը ուր Ռուսական զօրքերը Ասիոյ վրայ թափին Չինաստանի խորքը թափանցող իր երկաթուղիներով, գոնէ իր հակառակորդը յանցաւոր կը հանէ պատերազմի մը պարագային, և ինք, Ռուսիան, խաղաղութեան անկեղծ բարեկամը կը հանդիսանայ հանրային կարծիքին առջեւ :

Իսկ Պերլինի կարեւոր թերթ մը շահեկան և լուստես յօդուած մը հրատարակելով նոյն առաջարկի մասին, կը յայտնէ թէ նիքոլայ կայսրը երկար ատենէ ի վեր կը սնուցանէր այս գաղափարը, և սակայն Թուրքո-Յունական և Անգլո-Սպանիական պատերազմները արգելք եղած էին հրապարակուելուն : Չեռնհասանձերու կարծիքն այն է թէ յառաջիկայ գետապանխորհուրդին մէջ ռուս կառավարութիւնը Արեւելեան և Մայրագոյն Արեւելքի խնդիրներու լուծման ծրագիր մը պիտի ներկայացնէ, որովհետեւ Չարին համոզումով միայն այս խնդիրներու կարգադրութիւնը իր հաշտարար ծրագրին յառաջարանը կրնայ կազմել :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա, թանկի Կեօլլայէօյի քեանի խանութը, և Ապուրրահման մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Չարպահանէլեանի քով :

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Վանառակաւան թղթակցութեան և հաշուակալութեան լուսեղակ երիտասարդ մը, 10 տարուայ փորձաւութեամբ, քաջ ծանօթ պուլկարերէն, զաղիբէն և գերմաներէն լեզուաց, կը փափագի պաշտօն ստանցնել ուր որ ալ լինի, կը նախամեծարէ Ֆիլիպէի մէջ : Դիմել խմբագրութեանս միջոցաւ Բ. հասցէին :

Երիտասարդ և քաջառողջ Պօլսեցի հայ կին մը՝ կը փափաքի տուններ ծառայել իբր
Կ Ա Թ Ն Տ Ո Ւ
հասցէն Դ. թաղ թիւ 1154, Թ. տօր Բանայօթօֆի տունը :

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 20 Oguznu
ՊՈՒՂՏԱՅ
Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 8—9.10 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 8—10.40 ֆրանք

ԱՐԲԱ ԵՆՆԻ
Լիպրա 42—50 հէքթօլ. 4.60—5.20 ֆրանք

ԵՆՈՒԱՅ
Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տիր. 3.60—4 ֆրանք

ՏԱՐԸ
Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՅԱՍՈՒԿԵՍ
Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր. 100 օգգասը 14—21 ֆր. մակ կէօրէ : Առապա մուամէլէսի նաբօլէոն 21 ֆրանք հիսապը իւէ տիր. Կիւնտէ 8—10 վակօն, 200—250 արապա պուղտայ, 70—80 արապա արապ կէլմէքտէ տիր. Մըսըր եօզ սըր :

ՎԱՐԿՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԿԵՍԵՔԻՑ)
—)(—
(Գիւն 1 ձմրանգ)

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Եւրոպայի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտօն Կոչի մօտ : Ռուսուք՝ Հայկ Մայիսեանի սրճարանը : Սօֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով :

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բնութեան գրահերթ» :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ
—)(—
ԵՐՈՒՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԳԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ
—)(—
Գիւն 1 ձմրանգ

Կը վաճառուի Եւրոպայի խմբագրատունը :

ԻՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

—)(—
Կը սպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոման, նամակագրուի, հարսանեկան հրատարակիչ, մահադր, ինչպէս նաև պրօշիւռներ :

Գիւններն յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :